

հրատարակուած «Յառաջ» թերթի №. 1, 2 համարներով ոչ միայն ցոյց կուտայ անոնց հին ու նոր հայրենիքները (վերջինս Հայաստանի զանազան մասերու մէջ), այլ և անոնց ցիր ու ցուն բնակութիւնը ու զանազան տարրերէ կազմուած ցեղական հաւաքոյթը :

«Ասորի սեպագիր յիշատակութիւնները որոնք առհասարակ Նախասիրայի շատ ժողովուրդներու մասին շատ կամ քիչ տեղեկութիւններ պահեր են, ոչ մէկ տեղեկութիւն կուտան Քիւրդերու մասին, որմէ կը հետեւի թէ՛ Ասորի աշխարհակալներու մէջ՝ անոնք քաղաքական ինքնութիւն չէին ներկայացներ, քանի որ նոյն սահմաններու մէջ բնակող ուրիշ ազգեր կը յիշուին, և որոց հետ գործ ունեցեր են Ասորիները :

Քիւրդ անունի և նախնազոյն հայրենիքի մասին՝ երկարատեւ եւրոպացի գիտուններ այս համոզումն ունէին՝ թէ Քիւրդը նոյն է ինչ որ կը յիշէ Քսենոֆոն (404 թ. Ն. Ք. Ք) Կարտուխ անունով, իսկ Կարտուխները կը նոյնացուէին Դորդովէն. — Կորդուէն անուններու հետ : Վերջին անունները յայտնի են Հայ պատմիչներուն՝ Կորդուք, Կորդիք, Կորդրիք ձեւերով. իսկ Կորդուք և Կորդուաց աշխարհը, հին Սրմնիայի հարաւային նահանգներէն էր սահմանակից Ասորեստանի :

Բայց ներկայ գիտունները, օրինակ Բրոֆ. Montzka, հիմնուելով Ստրաբոնի (Յոյն աշխարհագիր (1 դար Ն. Ք. Ք) և ուրիշներու բացայայտ վկայութեան վրայ, կը մերժէ այս նոյնացումը և կը մասնանշէ հիւներու (Cyrт—Kurt) Քիւրդ անունի և ցեղի վրայ : Հին պատմիչները (Kurt) ցեղը կը ճանշնան Մարաստանի (Համադանի) և հին Պարսկաստանի (Շիրազ) լեռներու մէջ իրբեւ լեռնաբնակ, վաչկատուն և աւազակաբարոյ ժողովուրդ մը՝ և բնաւ կասկած չը կայ թէ՛ այս (Kurtu)ները (*) մեր այսօրուայ ղրացի Քիւրդերն են, որոնց նախ-

(*) Տարիներ առաջ Վանի մէջ երբ երկիւղ կար սահմանադրի Քիւրդերու Քաղաքի վրայ յարձակման, ընդհանուր ժողովրդեան մէջ այդ յարձակող Քիւրդերը կորուչէն Քուրու—Քուրու անունով : Քուրու